



Հոլանդիայի Հայ Դատի Հանձնախումբ

Հոլանդիա -2011 Յուլիս 06

Հաղորդագրություն

Սողոմոն Թեխլիրեանի հերոսական աքթի 90-ամեակի նուիրում ձեռնարկ

Յունիս 26, 2011-ին, Հոլանտայի Ալմելոյի Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ «Գալուստ Կիւլպէնկեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Սողոմոն Թեխլիրեանի հերոսական աքթի 90-ամեակի նուիրում ձեռնարկ մը, կազմակերպութեամբ Հոլանտայի Հայ Դատի յանձնախումբին եւ Հոլանտայի ՀՅԴ Գարեգին Նժդեհ երիտասարդական միութեան կողմէ:

Օրուան պատգամը փոխանցելու համար Գերմանիայէն յատկապէս հրաւիրուած էր Պերլինի Ազատ համալսարանի դասախօս, ուսումնասիրող **դոկտոր Թեսա Հոֆման**: Ներկայ էր նաեւ Հոլանտայի մէջ Հայաստանի Հանրապետութեան **դեսպան Ձիւնիկ Աղաճանեան**:

Ձեռնարկին բացումը կատարեց ընկ. Մինաս Արսէնեան, Հոլանտայի ՀՅԴ Արամ Մանուկեան կոմիտէութեան ներկայացուցիչ: Ընկերը հակիրճ անդրադարձ մը կատարեց Սողոմոն Թեխլիրեանին մասին, անոր կենսագրականը տալով ու ներկայացնելով առաքինի ու համեստ Դաշնակցական զինուոր-կամաւորը:

Ապա՝ բեմ բարձրացաւ Հոլանտայի մէջ ՀՀ դեսպան Ձիւնիկ Աղաճանեան, որ բարձր գնահատեց սոյն ձեռնարկի կազմակերպիչներն ու կարեւորութիւնը եւ յատկապէս Թեսա Հոֆմանի ներկայութիւնը, ըսելով՝ *«մի մարդ, ով առաջամարտիկ է Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման հարցում եւ, դարձնելով այն իր կեանքի գործն, անվերապահ նուիրումով է այն իրականացնում: Դրա համար իմ խորին երախտագիտութիւնն եմ ուզում յայտնել տկն. Հոֆմանին»*, ու շարունակելով ըսաւ՝ *«Թեխլիրեանի կրակոցը ոչ այլ ինչ էր, քան անպատժելիութիւնը կանխելուն ուղղուած գործողութիւն, ինչն ապացուցեց նաեւ գերմանական դատարանի վճիռը, որով նա ազատ արձակուեց: Այսօր ստեղծուած են միջազգային տրիբունալներ, գործում է Միջազգային քրեական դատարանը մարդկութեան դէմ գործած յանցագործութիւնների հեղինակներին դատաստանի առաջ կանգնեցնելու համար»*:

Հրաւիրուելով բեմ, Թեսսա Հոֆման – անգլերէնով ու միաժամանակ հոլանտերէն թարգմանութեամբ - ներկայացուց Թեհիլիբեանի արարքը, ներկայացուց ցեղասպանութեանց իրաւաբանական եզրը եւ զանոնք դատապարտելու ձեւերը: Հոֆման կեդրոնացաւ երկու հիմնական կէտերու վրայ՝ ա) Հայկական Յեղասպանութեան հարցին հետապնդման Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական դիրքաւորման անհրաժեշտութեան, ըսելով թէ՛ օրինական առումով, պետութիւնն է, որ պէտք է ցեղասպանութեան նման հարցեր հետապնդէ, եւ բ) թէ Հայկական Յեղասպանութեան հարցը պէտք է բարձրացուի ու հետապնդուի միջազգային, գերպետական դատարաններու կողմէ, օրինակի համար՝ Միջազգային քրեական դատարանին կողմէ:

Յաջորդեցին հարց ու պատասխան եւ հոլանտահայ գաղութը մեկնեցաւ վերանորոգուած ու հպարտանքի զգացումով:

Հոլանտայի Հայ Դատի յանձնախումբ

Հոլանտայի ՀՅԴ Գարեգին Նժդեհ երիտասարդական միութիւն